


VAN RESEARCH EXPEDITION VISITS WESTERN ARMENIA

Posted on August 17, 2011 by Keghart





Category: [Opinions](#)





[Yerkir](#), Press Release, Yerevan, 17 August 2011

The Van research expedition of Yerkir Union visited and carried out research in Hamshen, Dersim and other settlements of Western Armenia from July 18 to August 4.



[Yerkir](#), Press Release, Yerevan, 17 August 2011

The Van research expedition of Yerkir Union visited and carried out research in Hamshen, Dersim and other settlements of Western Armenia from July 18 to August 4.


The expedition studied local traditional musical instruments; dances and songs were shot, folk tales, legends, curses, blessings, prayers were collected.
The aim of the expedition was to promote the preservation of ethnic identity of Armenians living outside the Republic of Armenia in the Armenian Highlands and the Black Sea Basin, to establish and develop cultural ties.

«Երկիր» միության գիտահետազոտական արշավախումբը ուսումնասիրություններ է կատարել Համշենում և Դերսիմում

«Երկիր» միության «Վան» նախագծի շրջանակներում ձևավորված գիտահետազոտական արշավախումբը 2011թ. հուլիսի 18-ից օգոստոսի 4-ը այցելել և ուսումնասիրություններ է կատարել Համշենի, Դերսիմի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի մի շարք այլ բնակավայրերում: Արշավախմբի անդամ երաժիշտները («Վան» նախագիծ» խումբ, գեղարվեստական ղեկավար՝ Նորայր Քարտաշյան) գիտարշավի շրջանակներում մասնակցել են Արգուվանի երաժշտական փառատոնին (հուլիսի 24), ինչպես նաև Մնձուրի բնության և մշակույթի փառատոնին՝ Ելույթ ունենալով Դերսիմի Օվաջըկ (հուլիսի 29) և Խոզաթ (հուլիսի 30) քաղաքներում կայացած համերգներին:

Չուգահեռաբար, արշավախմբի կազմում ընդգրկված առանձին հետազոտական խումբը, ազգագրագետ Հրանուշ Խառատյանի և արևելագետ Անուշ Հովհաննիսյանի մասնակցությամբ, դաշտային ազգագրական հետազոտություններ է կատարել դերսիմցիների շրջանում հավաքելով ազգագրական բնույթի հարուստ նյութ:

Արշավախմբի կողմից կատարած դաշտային հետազոտությունների ընթացքում

- Ուսումնասիրվել են տեղական բնակչության ավանդական նվազարանները,
- Տեսագրվել են ավանդական երգերն ու պարերը,
- Տեսագրվել և/կամ գրի են առնվել վիպական բանարվեստի տեսակների (առասպել, հեքիաթ, ավանդագրույց, գուշակություն, անեծք և օրհնանք, աղոթք և այլն) մի շարք նմուշներ,
- Տեսագրվել և/կամ գրի են առնվել էթնիկ ոչ նյութական մշակութային ժառանգության այլ դրսևորումներ:

Գիտարշավն իրականացվել է Ֆրանսիայի Ռոն-Ալպ շրջանի իշխանությունների և «Ֆինեկո» կազմակերպության (www.fineco.fr) ֆինանսական աջակցությամբ, ինչպես նաև թուրքական «Անադոլու կուլտուր» հիմնադրամի կազմակերպչական օժանդակությամբ:

«Երկիր» միության կողմից իրականացվող «Վան» նախագծի հիմնական նպատակներն են.

- Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Հայկական բարձրավանդակի և Սևծովյան ավազանի տարածքում ապրող ծագումով հայ բնակչության մոտ բնիկ ինքնության պահպանմանը նպաստելը,
- Հայկական բարձրավանդակի և Սևծովյան ավազանի տարածքում ապրող էթնիկ խմբերի և Հայաստանի բնակչության միջև միջմշակութային կապերի հաստատումն ու զարգացումը, համատեղ արտահայտվելու հնարավորությունների ստեղծումը,
- Հայկական բարձրավանդակի և Սևծովյան ավազանի ավանդական երաժշտության և ոչ նյութական մշակութային ժառանգության այլ ճյուղերի ուսումնասիրությունը, դրանում առկա հայկական շերտի վերհանումը,
- Հայկական բարձրավանդակի և Սևծովյան ավազանի տարածքի հայկական ավանդական ժառանգության ներկայացմանն ու պրոպագանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

